ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Մարիամ Համամճյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման և աուդիտի կարգավորման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) 2025 թվականի մարտի 17-20-ը

3. Հրավիրող կողմը

Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոնի (CFRR) կողմից կազմակերպված «Ֆինանսական և կայունության հաշվետվողականության բարեփոխումներ. Կանաչ և թվային օրակարգեր» խորագրով նախարարական համաժողովին:

5. Քննարկված թեմաները

- Հաշվապահական հաշվառման ծառայությունների արդյունավետ զարգացման միտումները պետական և մասնավոր հատվածում.
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներում կատարված վերջին փոփոխությունները.
- Հաշվապահական հաշվառման և աուդիտի էթիկայի և կրթական ստանդարտներում կատարված վերջին փոփոխությունները, արհեստական բանականության կիրառման միջազգային փորձը.

- «Կանաչ քաղաքականության» կիրառումը մասնավոր հատվածում.
- Կայունության և ֆինանսական հաշվետվողականության ներդրման մարտահրավերները, զարգացումները և առանձնահատկությունները,
- Կայունության հաշվետվողականությունը հանրային և մասնավոր հատվածներում.
- Արհեստական բանականություն. ռիսկերը և հնարավորությունները հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում.
- Կայունության հաշվետվողականությունը և կլիմայի փոփոխությունների դեմ պայքարը հանրային հատվածի կազմակերպություններում.
- Կայունության հաշվետվողականությանն անցման ապահովումն առանց վարչական բեռի ավելացման, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման ապահովումը թվային հարթակներով.
- Կրթական ծրագրերով կայունության հաշվետվողականության զարգացման ամրապնդումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են Հունաստանի և Էստոնիայի Հանրապետություններում Հաշվապահական հաշվառման ծառայությունների արդյունավետ կազմակերպման միտումները հանրային և մասնավոր հատվածում, հանրային հատվածի հաշվապահական հաշվառման, ինչպես նաև էթիկայի և կրթական ստանդարտներում կատարված վերջին փոփոխությունները: Ներկայացվել են արհեստական բանականության կիրառման հնարավորությունները և ռիսկերը հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում: Քննարկվել են նաև Կայունության և ֆինանսական հաշվետվողականության ներդրման մարտահրավերները, զարգացումները և առանձնահատկությունները, ինչպես նաև ներկայացվել է թվային հարթակների միջոցով Հունաստանի Հանրապետությունում կայունության հաշվետվությունների ներկայացման փորձը:

Համաժողովի ընթացքում ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում իրականացված ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումները, այդ բարեփոխումների ճանապարհին հանդիպած մարտահրավերները և դրանց հնարավոր լուծումները, ինչպես նաև կայունության հաշվետվողականության ներդրման հետ կապված մարտահրավերները:

Բացի այդ, ներկայացվել են նաև ծրագրի մի շարք այլ շահառու երկրներում ֆինանսական հաշվետվողականության ոլորտում իրականացված բարեփոխումները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ընթացքում առաջարկություններ են ներկայացվել հաջորդ աշխատաժողովի ընթացքում քննարկման ենթակա թեմաների ու ուղղությունների վերաբերյալ, որոնք առավել հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում ծրագրի մասնակից երկրների մասնագետների և մասնագիտական համայնքի համար:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Մարտի 25, 2025թ.